

ՆՈՐ ԱՎԵԾԱՔԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 31 ՅՈՒԼԻՍ, 1930

ԹԻԻ 13

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ ՄԸ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՀՈԴԻՆ ՍՈՒՐԲ ԻՆՉԷ

ՎԵՐ. Կ. ԱՏԱՆԱԼԻԵԱՆ

ԴՐՈՒԱԴ ՄԸ ԺԱՆ ԺԱԳ ԲՈՒՍՈՅԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ԵՂԻԱԵԱՆ

ԿԱՆՏԻ

ՎԵՐ. Բ. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ

ԴԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐՕՆՔ

ՆԱՄԱԿՆԵՐ

ՊՈՒԷՆՍՈՒ ԱՅՐԷՍԷ

ԹՂԹԱԿԻՑ

ՊԷՅՐՈՒԹԷ

ՊՐ. Լ. ԱՂԷԿԵԱՆ

ԿԻՊՐՈՍԷ

ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ «ԳՈՂԷՃ» ՀԱՆԷՊ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԿԸ

Ազգայնականության Չարքա Տիգրանի
գրուածներէն

ԳԼՈՒԽ Գ.

ԵՐԿՐՈՐԴ ՈՊԻՆ

Այս ատեն սկսաւ մթննայ, ձիւնը սաստիկ կը տեղար, մինչգիւ Սքրուճ և Ոգին միասին կը յառաջանային փողոցներուն մէջէն: Խիստ հաճելի էր տեսնել խոհանոցներէն ճարճատող կրակներուն լոյսը, հիւրանոցներու ու ճաշարաններու արտասովոր զարդարանքները: Տեղ մը կրակին բոցը ցոյց կուտար այն մեծածախս պատրաստութիւնները՝ որ կը կատարուէին Ծնունդի յատուկ ճաշկերոյթին համար, մութ կարմիր գեղեցիկ վարագոյրները՝ որոնք քիչ խաքը պիտի կախուէին՝ մութը ու ցուրտը գուրս վանելու համար:

Ուրիշ տեղ մը, տան բոլոր մանուկները դուրս կը վազէին դիմաւորելու համար իրենց նոր ամուսնացած քոյրը և ուրիշ ազգականները՝ որոնք Ծնունդի առթիւ շնորհաւորութեան կուգային: Ու մանուկներէն իւրաքանչիւրը՝ կը մըլցէին միւսներուն հետ՝ որպէս զի ինքը առաջին անգամ «Շնորհաւոր Ծնունդ» ըսէ եկողներուն:

Ուրիշ տան մը վարագոյրին վրայ կ'երեւէին եկող հիւրերուն շուքերը:

Ուրիշ տան մը խումբ մը գեղանի օրիորդներ, զարգարուն չալերով՝ և մուշտակեայ կօշիկներով՝ զրացիին աչցելութեան կ'երթային, ամէնքն ալ գուարթ կատակարանութիւններ ընելով:

Ու յանկարծ, Ոգին ու Սքրուճ ինքզինքնին գտան ու ու ալեկոծ ծովու մը վերելք, կարծես մեղմիկ կը թռչէին մինչև որ ծովեզերքէն շատ հեռու նաւ մը հասան, ու իջան անոր առաջակողմը:

Անոնք նշմարեցին զեկավարը, որ այդ խոտաշունչ ցրտին իր պարտականութեամբ կ'զբաղէր. պահապանները՝ նաւաստիները, մեքենապործը, և ամէն ոք իրենց գործին պարսպած: Սակայն ամէնն ալ կամ Ծնունդի մեղեդի մը կամ Ծննդեան հաճելի պատմութիւն մ'ունէին իրենց շրթներուն վրայ: Երջանիկ էին Ծնունդի օրհնարիւր երջանկութեամբը:

(Շարունակելի) 23

ՏՂԱՅ ՄԸ Կ'ՈՒԶՈՒՄ

«Քաջ և բարեացակամ տղայ մը կ'ուզուի, որ ճշմարտութիւնը խօսելէ չվախնայ, որ ոչ մէկ բանի համար ոչ մէկ մարդու սուտ չխօսի, որ իր ծնողքը, եղբայրները, բարեկամները սիրէ և յարգէ, որ կարող ըլլայ «ոչ» ըսելու և անոր կառչելու, «այո» ըսելու և գայն կատարելու, որ որոշէ երբեք չծխել և որեւէ մօլութիւն չունենայ, որ նախընտրէ իր տան մէջ օգտակար գործերով զբաղեալ մնալ քան թէ փողոցներու մէջ թափառիլ, որ կարողանայ իր ճակատը վեր բռնել անվայել արարքներ կատարելու անընդունակ ըլլալուն համար, ու կանոնաւոր կերպով զարոյց յաճախէ, որ Հայ ըլլալուն համար ինքզինքը հրպարտ զգայ, և այդ պատճառաւ կ'ուսնի մէջ իր բոլոր պարտականութիւնները պատուաւոր կերպով կատարէ. որ օրինական բարոյական ազատութիւնը վայելիլ կարողանալու համար զիտնայ պատուաւոր աշխատութեամբ իր տնտեսական ազատութիւնը կերտել, քանզի աղքատ և կարօտ մարդիկ ուրիշներէն կախեալ պիտի ըլլան, և օտար կամքին հպատակ ըլլալէ զերծ պիտի չմնան. որ օրէնքները յարգել զիտնայ եւ ուղիղ ըլլայ:

— Ազգը միշտ այսպիսի տղու մը պէտք ունի և *usheghayatsorken* պէտք ունի»
Պ. Այրէս Սպաներենէ յարմարաբար
Թ. Մ. ՀԱԼԷՊԵԱՆ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆՔՊ, 31 ՅՈՒՆԻՍ, 1930

ԹԻԻ 13

ՊԱՏՄԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ ՄԸ

Կիլիկիոյ Կաթողիկոս Վեհ. Տ. Տ. Ս. Խապատեան, Կ. Դպրոցի շուրջ յարուցուած աղմուկին առթիւ իր «Կ'օրհնեմք» էն վերջ այս անգամ մասնաւոր կոնդակով* մը կ'ուզայ Հայց. Առաք. Եկեղեցիի կողմէ Կ. Դպրոցին որդեգրումը նուիրագործել պաշտօնապէս և հրապարակաւ: Մերունազարդ Հայրապետը մեծապէս շնորհաւորելի է իր առած այս իմաստուն, անվեհեր և վճռական քայլին համար որ Հայց. Եկեղեցւոյ տարեգրութեանց մէջ պատմական պիտի մնայ:

Նորին Ս. Օծութիւնը իր այս կոնդակով կը նկարագրէ Հայ կեանքին հոգեւոր և բարոյական ինկածութիւնը, կը շեշտէ կրօնական բարոյական դաստիարակութեան անհրաժեշտութիւնը, կը խոստովանի ներկայ միջոցներուն անբաւարարութիւնը այս նպատակին իրագործման համար, կը յիշէ նոր մեթոտի մը պէտքը, հետեւաբար Կ. Դպրոցի որդեգրումը, որ թէպէտ օտարներէն փոխ առնուած և սակայն միակ դարմանն է մեր ցաւին, յիշել կուտայ մեր նախնեաց թարգմանչաց օտարներէն ըրած փոխառութիւնները, որոնք թէպէտ մեզի համար շատ օգտակար եղած էին բայց ատենին բուն ընդդիմութեան հանդիպած: Ապա Կ. Դպրոցներու հաստատման համար 1927 էն իվեր կատարուած ջանքերուն պատմականը ընելէ և հաւանայ պայմանաւորով այս քործը

կազմակերպելու և վարելու հրաւիրուած Պր. Լեւոն Զէնեանը ներկայացնելէ վերջ կը յորդորէ Հայ ժողովուրդը և պաշտօնական անձերը որ «առանց խառնելու առանին և հրապարակային ասուլիսներէն . . . հոգածու ըլլան կրօնական և եկեղեցատիրական ոգին վառ պահելու Կիրակնօրեայ Դպրոցներով»:

Յատկանշական են հետեւեալ հատուածները, ուր ալեւիա Հայրապետին զողով մատերը այնքան գեղեցիկ և կորովի առդեր շարած են. —

«Մենք չենք կրնար անտեսել Հայաստանեայց Եկեղեցւոյ շուրջ լարուած ընտանի և օտար թակարկները. չենք կրնար թոյլ տալ որ հայ մատաղ սերունդը հակակրօն գաղափարներով դաստիարակուի, մենք չենք ներեր որ հայ երիտասարդութիւնը եղբայրատեաց զըգացումներով դաստիարակուի: Մենք յայտնի կերպով կը տեսնենք թէ ի՞նչ պիտի ողբալի վիճակի մը մէջ ինկած է Աւետարանի լոյսէն, կրօնքի սրբարար շնորհքէն զրկուած հայ երիտասարդութիւնը: Մենք կ'ուզենք որ մեր Մայրիկի Եկեղեցւոյն զաւակները հարազատ զաւակները ըլլան իրենց Ընտանիքին, Ազգին և իրենց Եկեղեցւոյն: Չենք կրնար թոյլ տալ որ աս ու ան իր ուզած կերպով խաղայ մեր Եկեղեցւոյն անուան հետ և մեր երիտասարդութեան ճակատագրին հետ: Վերջապէս չենք ուզեր որ անկրօն և տգէտ մեծնայ հայ ժողովուրդին երիտասարդ սերունդը»:

«Այսօր ալ պակաս չեն վայրախօսներ մեր շուրջ, զրպարտիչներ, ստախօսներ, կեղծ եկեղեցասէրներ, որոնք Եկեղեցի

*Այս կոնդակը տետրակի ձեւով լոյս ածած է Ս. Յակոբայ տպարանէն.

ոտք չեն կոխեր և եկեղեցասիրութիւն կը ծախեն ի հաշիւ անձնական կամ կուսակցական գոհնիկ նկատումներու։ Սրտանց կ'արգահատինք այնպիսի հայերու վրայ և կ'աղօթենք որ Աստուծոյ շնորհքին արժանանան և զղջան իրենց

գործած չարիքներուն և մեղքերուն վերայ։ Սիրելի՛ ժողովուրդ Հայոց, կաթուորութիւն մի՛ ընծայէք կեղծաւորներու վայնասուններուն։ Հաւատարմութեամբ և սիրով հետեւեցէք Ձեր ծերունի Հայրապետի խրատներուն։»

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ՆՈՒԱԳՈՂ ԹԵԼԵՐԸ

Շատ դարեր առաջ Գերման կոմս մը պալատական կեանքէն ձանձրացած իր թագաւորէն արտօնութիւն առաւ կամաւոր աքսորութեան։ Հռենոսի եզերքը ժայռի մը վրայ հաստատուած հին բերդի մը մէջ իրեն տուն մը շինեց և երկար տարիներ հոն ապրեցաւ։ Բերդին մէկ ծայրէն միւսը երկու թելեր քաշուած էին, որոնց վրայ հովերը զարնուելով գեղեցիկ նուաճիւր պիտի արտադրուին խորհեցաւ կոմսը։ Բայց տարիներ անցան և թելերը իւրեք ծայն չհանեցին։ Գիշեր մը սակայն փոթորիկ մը յառաջ եկաւ։ Կոմսը շատ անհանգիստ եղաւ և սկսաւ իր բնակարանին մէկ սենեակէն միւսը երթալ գալ՝ դուրսը ելաւ և յանկարծ շէնքին սեմին վրայ մուծին և փոթորիկին մէջ նուազի ծայն մը լսեց որուն նմանը երբեք չէր լսած։ Երկար ատենէ ի վեր անծայն կեցող թելերն էին որ կը նուազէին, փոթորիկի մը ամբողջ սաստկութիւնը պէտք եղած էր որ սովորական հովի համար շատ ծանր այդ թելերը ծայն առային։ Յաւի հոգի և վշտի փոթորիկներն են որ մեզի երկել կը ստրկեցնեն։ Կեանքի դառնութիւնը կը շինէ մեր կեանքի երգը։

ԵՐԲ ՄՇՈՒՇԸ ՓԱՐՍՏԻ

Ուսթէրլոյի պատերազմի միջոցին բոլոր Անգլիան անձկութեամբ այդ օրուան կռուին հիշին կ'սպասէր, որ լոյսի

նշաններով կայանէ կայան կը հաղորդուէր։ Օրը շատ յառաջացած էր երբ Ուինչէսթըրի Մայր Եկեղեցիին աշտարակին կայանը սա նշանը տուաւ։ «Ուէլինկթըն պարտեալ։» Ճիշդ այդ պահուն թանձր մշուշ մը լոյսի նշանները անտեսանելի ըրաւ։ Աղէտի լուրը շուտով տարածուեցաւ։ Բոլոր երկիրը քիչ վերջը մեծ յուսահատեցուցիչ թախիծի մատնուեցաւ։ Ապա մշուշը փարատեցաւ և հազարազարութիւնը լրացաւ սապէս։ «Ուէլինկթըն պարտեալ թողուց թշնամին։» (W. defeated the enemy.) Անմիջապէս վիշտը ուրախութեան և պարտութիւնը յաղթութեան փոխուեցաւ։ Նմանապէս երբ Յիսուս Յովսէփի գերեզմանը թաղուեցաւ աշակերտները գինքը պարտեալ նկատեցին։ Բայց երբորդ օրը երբ մշուշը փարատեցաւ Յիսուս յարութիւն տուաւ՝ պարտութեան մատնելով մեղքը և մահը և անոնց սիրտերը ուրախութեամբ լիցուեցան։

ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀ ԳՈՒԼԻՃ ԵՒ ԿՐՕՆՔԸ

«Մեր ընկերային և տնտեսական յարաբերութիւնները բարւոքելու համար կրօնական դաստիարակութիւնէ կատուէ միջոց չիմ տեսներ։ Յիրաւի զարգացումի և բարեկարգութեան մէջ այնքան յառաջացեր ենք որչափ որ մեզի կարելի եղած է, այնպէս որ կրօնական ճշմարտութիւնները աւելի ընդհանրացնելու պէտք ունինք։ Առանց անոնց մեր ըրած բարեկարգութիւնն ու զարգացումը պիտի տնայայտանան։»

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ ԽՆՁ Ի

—ԱՍՏՈՒԱԾ ՄԱՐԴՈՒ ՄԷՋ

Մեր նպատակը հոս աստուածաբանական խնդիրներու մէջ մտնել չէ, այլ քիչ մը հասկնալու աշխատիլ մեր նիւթը: Ասիկա պէտք է քանզի այդ մեծ խնդիրին — անձին — վրայ է ՀՈԳԵԳՍ-ԼՈՒՍՏԻ 1900-րորդ տարեդարձին տօնական տարութիւնը:

ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ ԸՍԵԼՈՎ ԽՆՁ ԿԸ ՀԱՍԿՆԱՆՔ:

Գործնական սահմանն է, Աստուած մարդու մէջ: Աստուած մարդուն հոգիին մէջ կը գործէ, Քրիստոսի գործին եւ առաքելութեանը մէջ փնտռած արդիւնքները լրացնելու համար:

Մէկի մէջ երեք կամ Երրորդութեան այժմու աստուածաբանական դադափալը դեռ չկազմուած՝ Աստուծոյ երեք կերպ արտայայտութեանց կամ գործունէութեանց վրայ որոշ գիտակցութիւն մը կար մարդոց մէջ: Առաջինը՝ Աստուծոյ ընդհանուր յարաբերութիւնը աշխարհի եւ մարդոց հետ: Երկրորդը՝ Աստուծոյ մասնաւոր յարաբերութիւնը Քրիստոսի առաքելութեան, անձին ու գործին հետ: Երրորդը՝ Աստուծոյ մարդկային հոգւոյն մէջ բնակիլն ու գործելը: Այս վերջին կամ երրորդ արտայայտութեան մէջ Աստուած իբր հոգի կը մօտենայ մարդուն հոգւոյն, հոգեւոր հաղորդակցութեան եւ ազդեցութեան նպատակաւ: Այս պատճառաւ անիկա Ս. Հոգի կը կոչուի: Երբ Աստուած իբր հոգի կը ներգործէ մարդուն հոգւոյն մէջ, սուրբ նպատակաւ, կը կոչուի Նոր Կտակարանի Ս. Հոգին: Իրական կեանքի մէջ մարդս Աստուծոյ հետ յարաբերութեան ու հաղորդակցութեան բերելը՝ Անոր հետ հաշտեցնելու նպատակ մըն է, որուն համար Քրիստոս աշխարհ ե-

կաւ, մարգացաւ, մեռաւ եւ յարութիւն առաւ: Անոր համար Հայր Աստուած փրկագործութեան բոլոր ծրագիրը կազմեց, եւ անոր համար Ս. Հոգի Աստուած կը գործէ կատարելագործելու զայն:

Ս. Հոգին Աստուածային անձ մըն է, ոչ թէ պարզ ազդեցութիւն մը:

Ս. ՀՈԳԻՆ ԳՈՐԾԸ ԵՐԵՔ Ի

Նախ՝ աշխարհիս մէջ. — «Ինքը երբոր գայ՝ աշխարհը պիտի համոզէ մեղքի համար, արդարութեան համար եւ դատաստանի համար», (Յովհ. 16. 8) ըսաւ: Այս՝ Ս. Հոգւոյն մարդոց վրայ ըրած ընդհանուր ազդեցութիւնն է: Ամէն բարի բան որ մարդոց մէջ կ'երեւայ, Ս. Հոգւոյն սնուցիչ հոգատարութեամբ զը մեծնայ: Ժողովուրդին խզմտանքը կ'արթնցնէ, ուղիղի ու սխալի մասին եղած համոզումները կը հաստատէ: Ամէն բարեգործութիւն Ս. Հոգւոյն գործըն է:

Երկրորդ՝ Ս. Հոգւոյն գործը եկեղեցիի մէջ. ասիկա աւելի խորունկ, մասնաւոր եւ արմատական է: Հոգիին գործը Քրիստոնեաներու մէջ տարբեր է եւ աշխարհիս մէջ տարբեր է, ինչպէս որ Քրիստոնեաները աշխարհէս տարբեր են: Հոգին անաչառ է. ան մասնաւոր կերպով պիտի սորվեցնէ ու համոզէ եկեղեցին ճշմարտութեան՝ որուն համար աշխարհս ընդհանուր առմամբ պատրաստ չէ: Ս. հոգին Քրիստոսը կը բացատրէ եկեղեցիին, Քրիստոնեաները կատարեալ ճշմարտութեան կ'առաջնորդէ... Ս. Հոգիի մասնաւոր ազդեցութեամբ եղան այն առաջին դարու վեհ քարոզութիւնները, նահատակութիւնները... մեծ ու հոյակապ գրութիւնները, որոնց հաւաքածոն Նոր Կտակարան կը կոչենք:

Սակայն Ս. Հոգւոյն ճշմարտութեան առաջնորդող գործը սոսկ առաջին աշակերտներով ու առաջին դարու հայրապետներով չվերջացաւ: Ամէն դարու մէջ յայտնութիւններ ունի տալիք, Այն

րայ բնակութիւն տրուած է ճերմակ, աղուոր սագերու, որոնք համայնքին կը պատկանին և կը կերակրուին հոն զուարճացողներու կողմէ: Ժընև եկող ամէն այցելու գէթ անգամ մը ոտք կը դնէ հոն: Մանաւանդ խաղաղութիւն փնտռողներուն համար սիրելի է հոն առանձնանալ և շուքին ներքե հանդարտ ընթեռնուել:

«Րուսոյի կղզին» կը կոչուի ան՝ որովհետեւ Ժընևցիք՝ ի պատիւ անոր՝ այդ խաղաղիկ վայրը ընտրած են իր յուշարձանին համար: Իմաստալից է, որ քաղաքին պողոտաներուն մօտ բայց անոնց իրարանցումէն հեռու և բնութեան աւելի մերձ վայր մը կանգնեցուցած ըլլայ յուշարձանը մէկու մը՝ որ բնութիւնը այնքան սիրեց և իր նմաններուն քարուղեց զայն սիրել: Լսած եմ, և միայն պատկերի մէջ տեսած, որ իր դամբանն ալ կը գտնուի այսպիսի անդորր կղզեակի մը մէջ յէրմընովի (Հիւս. Ֆրանս.):

Բարձրահասակ ծառերու հովանիին տակ, թարմ կանաչութիւններով եւ ծաղիկներով չըջապատուած՝ հասակի բարձրութեամբ պարզ պատուանդանի մը վրայ կը հանգչի Րուսոյի արձանը: Նստած դիրք մը ունի ան, աթոռակի մը վրայ՝ որուն ներքեւը գիրքեր լեցուած են, մէկ ձեռքին մէջ գրիչ մը վեր բռնած, միւս ձեռքով բաց գիրք մը ծռնկին վրայ առած, գլուխը քիչ մը գէպ ի յառաջ հակած՝ խորունկ մտածողի մը դիրքով: Իր չըջապատութեան հետ ներդաշնակութիւն մը կը կապմէ անշարժ նիւթէ այդ մարմինը: Կ'արծեա բնութիւնը զայն իրեն ընդունած և միացուցած է:

Ասիկա ճիշդ այնպիսի վայր մըն է ուր Րուսոն կը սիրէր գտնուիլ, բնութեան սրտին մօտ, խաղաղութեան հետ առանձնացած, իրեն մտերիմ ունենալով ծառն ու ծաղիկը, թռչուններն ու

հոտոյ ջուրերուն ձայնը: Դնճղակներն ալ կարծես կը սիրէին այդ արձանը: Իր շուրջը կը թռչտին, կուգան կը մըտնեն անոր թեւերուն տակ: Կը թառն իր գրիչին վրայ, իր աչքերուն խոռոչներէն բաներ մը կը փնտռեն, եւ իրենց տոտիկներով գլխուն մագերը կը խառնեն: Հոն բնութեան տարրերը մտերմացած են Րուսոյին հետ:

* *

Օր մը բախտը կ'ունենամ քանի մը ուսանողներով Րուսոյի կղզին այցելելու, առաջնորդութեամբ Ժընև քաղաքի զեղեցկացումին եւ Հնութեանց Պաշտպան Յանձնախումբին նախագահին Մ. Կ. Փ. ի, որ հեղինակութեամբ կը պատմէ մեզի այս արձանը չըջապատող պարագաներէն, եւ ի մէջ այլոց՝ հետեւեալ զրուակը:—

Ժան Ժապ՝ Ժընևի մէջ ծնած և անոր ներշնչումներով չըջապատուած՝ պատանի մըն էր եռանդոտ այլ մեծամտ ծառնալուծ քով: Հայրը՝ մամագործ՝ զանազան տեղեր փորձելէ վերջ զայն արհեստի տուած էր փորագրիչի մը քով: Ժան՝ օրուան աշխատութիւններէն վերջ՝ ամէն իրիկուն պատեհութիւն կը փնտռէր քաղաքէն դուրս ելլելու: Կը պտըտէր գետի երկայնքին, կը թափառէր դալարութիւն մէջ, աւելի մօտէն ունկընդրելու բնութեան ձայնին, որ կ'զգար թէ զինք իրեն կը կանչէր եւ՝ կը կտրծէր երբեմն՝ որոշ բաներ կը փոփոար իրեն: Կը սիրէր այդ առանձնութիւնը, որ զինքը կը միացնէր բնութեան եւ իրեն զգալ կ'ուտար թէ ներդաշնակութիւն մը կը յօրինուի անոր եւ իր հոգեւոյն միջեւ: Իր յափշտակութեան մէջ, սակայն, յաճախ կը մոռնար ժամանակին սահիլը, կ'աթափէր միայն երբ զիշերը զար զինք հալածելու: Այն ատեն շտապով եւ սրտատրոփ կը վազէր գէպ ի քաղաքին պարիսպները:

Ինչպէս որ այսօր մարդիկ իրենց հրկիրներուն շուրջը «սահմանագիծ»եր կը քաշեն եւ պահակներ կը դնեն որոշ անցքերուն վրայ, նոյնպէս այն օրերուն մարդիկ իրենց քաղաքներուն շուրջը «պարիսպ» կոչուած այլանդակ պատեր կը բարձրացնէին, իբր իրենց զրոցի. թշնամիներուն դէմ պաշտպանութեան միջոց: Եւ մինչեւ որ ամէն իրիկուն այդ պարիսպներուն գոները չգոցուէին եւ քաղաքը իր պատեանին մէջ կձկուած կենդանիի ձեւը չ'առնէր, մարդիկ ներսը ապահով չէին կրնար քնանալ: Ժընեւ մին էր այս պարսպաւոր քաղաքներէն, կանգնած վաճառականութեան քառուղիի մը վրայ:

Եւ այսպէս, պատահեցաւ որ Մայիսի օր մը Ժան Ժաք վերջալոյսի պահերը դաշտորայքը անցունելու ելած էր, եւ ով գիտէ ինչ խորհուրդներ զինք վերացուցած էին, որ յանկարծ յուշքի եկաւ նկատելու՝ թէ ատենը անցուցած էր: Իրականութիւններու դէմ բաղխելով փշրուած երազներու յաջորդող պաղ ըզգացումներու պէս գիտակցութիւնով մը լիցուն, սկսաւ արագ վազել դէպ ի պարիսպին զուռը: Ուշ էր: Հագիւ թէ զինքը գուռնէն բաժնող գետին եզերքը հասած էր շնչառապառ, տեսաւ որ հրկաթեայ կիսադուռը կը ճոնչէր ալդէն: Կանչեց հեքոտ. բայց դռնապանը՝ չոր օրէնքի զործագիր մեքենայ՝ չ'անսաց պատանիին պաղատանքին եւ դուռը փակեց անոր երեսին:

* *

Ժան պարիսպներէն դուրս մնացած էր: Խաւարը սկսաւ պաշարել զինք եւ ամայութիւնը կը թափանցէր հոգւոյն մէջ, ինչ որ իր պատանիի միտքը նախապաշարումներով կը խոռվէր: Առանձնութիւնը զոր այնքան կը սիրէր՝ հիմա վախ կ'ազդէր իրեն:

Բայց ինչ որ զինք աւելի կը վրդովէր, զիչերը դուրսը անցնելը չէր: Այս

նոյն փորձառութիւնը ասկէ առաջ ալ ունեցած էր— ուշացած՝ եւ դռները փակ գտած: Կը յիշէր հիմա որ անգամ մը մինչեւ առաւօտ նստած էր ուշ հասած վաճառականներու բարոյկին շուրջ, եւ ունկնդրած անոնց արկածախնդրութեանց պատմութիւններուն, որոնք խիստ յուզած էին իր երեւակայութիւնը: Ուրիշ անգամ մը լուսնկան հետ մեծախօսելով գիշերը լուսցուցած էր: Այս գիշերն ալ կրնար կերպով մը անցնել: Բայց իրեն համար դառն եկողը հետեւեալ առտուան փորձառութիւնը պիտի ըլլար: Ժայրը խիստ յուզուած պիտի ըլլար նորէն, հայրը դարձեալ խիստօրէն պիտի յանգիմանէր զինք եւ նոյնիսկ ըստառնար... իսկ փորագրիչ վարպետը նորէն անխնայ պիտի ծեծեր զինքը՝ առտուն գործի ուշանալուն համար: Վաղուան վրայ այս մտածումները Ժանը խիստ կը տանջէին:

Քարի մը վրայ նստած կը խեղտը Ժան Ժաք. ի՞նչ ընելու էր: Սպասէ՞ր, համակերպէ՞ր ճակատագրին. այս մտածումը ցուրտ սարսուռի մը պէս կ'անցնէր իր մարմնին մէջէն: Անմիջապէս միտքը կ'ուզային յանդիմանութիւնն ու ծեծը: Այս զգացումներու ներքեւ, հիմա քաղաքը ալ տեղի կ'որոշուցուցած էր իր հրապուշտը, որ տեսակ մը բանա կը թրւէր: Եւ կ'զգար որ իր հոգւոյն մէջ ըմբոստացում մը կ'արթննար այդ դուռ-թեան դէմ: Ժան՝ այդ մեղմ ու լռիկ տրդան՝ հիմա իր մէջը զօրաւոր բան մը կը գտնէր: Խիզախ ոգի մը իրեն տիրացած էր: Ո՛չ, պիտի չ'անճրկէր այս պարադային առջեւ. Ժան պիտի չհամարէր պէր այն ճակատագրին որ ջէր յարմարէր իր զգացումներուն: Ոտքի ժլաւ, եւ վճռական վայրկեանի մը մէջ կռնակը դարձուց այն քաղաքին դէմ որ իր առջեւ պարիսպներ կը քաշէր, եւ անոնց՝ որոնք զինք չէին ճանչցած: Դէպի օտարութիւն...:

Այդ բոլորն սկսաւ ժան ժապի կեանքին Ողիսականը: Անցաւ Յրանսա. բայց առաջին քայլին իսկ հանդիպեցաւ ահաւոր դժուարութիւններու: Պանդուխտը կը փնտռէր բան մը զոր ինքն ալ չէր կրնար ճշգրիտ թէ ի՞նչ է եւ ո՞ւր: Բայց տարիներէ թափառումներէ եւ դառն խարկանքներէ ու փորձառութիւններէ վերջ, սկսաւ իր մէջը փթթիլ զրազէտը եւ յառաջ անցնիլ փիլիսոփան, մինչեւ որ եղաւ այն ժան ժագ Բոսանի զոր կը ճանչնայ աշխարհ այսօր:

* *

Ակնարկս կ'երթայ դարձեալ այն պարզ արձանագրութեան որ կայ յուշարձանին պատուանդանին վրայ— Ժան ժագ Բոսայ՝ Քաղաքացի Ժընեւի: Քաղաքացի Ժընեւի՞: Ի՞նչ հեղինակը: Յրանսան կը պարծենայ, եւ բոլոր աշխարհի կը ծանուցանէ իր բառագիրքերուն, համայնագիրտարաններուն, տարեգիրքերուն մէջ— Ժան ժագ Բոսայ՝ Յրանսացի Փիլիսոփայ, եւ անոր մարմինն ալ ամփոփած է Փարիզի Պանդէոնին մէջ, Հիւկոյի քով: Մինչդեռ Ժընեւը, քաղաքը որ զայն ծնաւ բայց իր պարիսպներէն դուրս ձգելով կորսնցուց զայն իր քաղաքացիին անուանելու առջնիկութեան իրաւունքը, կարծես քառութեան համար հիմա անոր արձանը կանգնեցուցած է այս պատուական վայրը, եւ ներքեւը փորագրած— Ժան ժագ Բոսայ՝ Քաղաքացի Ժընեւի: Ժընեւի մէջ մանկավարժանոց մըն ալ հիմնած է անոր անունով: Դուրս ձգել իր զաւակը, եւ յետոյ անոր յաջողութիւններով պարծենալ...

Ընթերցող մը հոս պիտի ըսէ. այս դրուագէն կ'եզրակացուի որ անսպասելի դժբաղդութիւն մը անսպասելի օրհնութիւն մը յառաջ բերաւ: Ասոր ես չեմ հակասիր: Արդարեւ երբեմն զժբաղդութենէ մը բարիք կուգայ. բայց յաճախ չարաչար գործածուած եզրակացութիւն մըն է այս բեմերէն:

Ամեն մտայ իր դժբախտութենէն բարիք չի կրնար հանել— շատեր կ'անճրկին կը մնան անոր առջեւ, պէտք եղած նկարագրի տոկունութիւնը չունենալով— իսկ ամեն դժբախտութիւն բարիք չի տա: Այլապէս՝ ինչո՞ւ ամէնքս ալ մեր կեանքի զբաղումը չենք ընել մեր վերայ դժբախտութիւն հրաւիրելը... կը խորհիմ նոյնիսկ, որ որքան կանոնաւոր դադրեցնենք այսպիսի պարագաներու մէջ «դժբախտութենէ բարիք» դասը հանելու սովորականութիւնը, այնքան շատ հեռացած կ'ըլլանք ինքնախաբէութենէ մը որ չարիք միայն կրնայ բերել:

Ոչ, ես այս պահուս ուրիշ եզրակացութեան մը վրայ եմ: Ես կը խորհիմ՝ մէկ կողմէն՝ այն արիւթեան վրայ որ խառնուած կար ժանի սրտին փափկութեան հետ, ի հարկին ծառանալու այն անարդարութիւններու դէմ որոնք իր անձին ազատ զգացումները կաշկանդել կ'ուզեն: Եւ կը խորհիմ՝ միւս կողմէն՝ ներկայի այն ծնողքներուն եւ դատարարաներուն վրայ որոնք պահ մը կ'անգ չեն անոնց իրենց տղոց սրտի խաւերէն ներս թափանցելու, հասկնալու հոն թաքնուած եւ փթթիլ ուզող զգացումները, այլ ընդհակառակը՝ կ'աշխատին ամէն միջոցներով մարել անոր մէջ ամէն ինքնատիպ արտայայտութիւն, կաղապարել տղան կարգ մը հաստատակերպ, աննկուն «սովորութիւններով», եւ անկէ որեւէ պղտիկ չեղում մը դէպքի ինֆլուանսիւնը կ'որակեն «արտասովոր նկարագիր», «ըմբոստութիւն», «զոր պէտք է անմիջապէս խեղդել»: Ես կը խորհիմ այն վարպետներուն վրայ որոնք իրենց յանձնուած տղոց նրբութիւններուն հետ կոշտօրէն կը վարուին, տղոց համար աշխատանքը տառապանքի մը կը վերածեն, անոնցմէ կը չինեն իրենց ապագայ նմանները:

Ես կը խորհիմ՝ մանաւանդ՝ արդի-

ական օրերու այն պարիսպաւոր քաղաքներուն վրայ սրունք իրենց դռները կը փակեն իրենց «քաղաքացի» անդամներուն երեսին—բարեկարգեալ այն եկեղեցիներուն եւ հղթարակցութիւններուն վրայ՝ որոնք գեռ հնական պարիսպներուն մէջ կը պարփակուին, եւ հոգեկան շնորհքներուն դուռներուն տիրացած՝ զանոնք կը բանան միայն որոշեալ ժամերուն եւ որոշեալ պայմաններով, կը մերժեն իրենց ժողովներէն ներս ընդունիլ զանոնք որ իրենց սովորութիւններուն չեն կրնար համակերպիլ՝ որովհետեւ մէջերնին աւելի ազատ ոգի մը կը տիրէ եւ որովհետեւ ունին արտաքին կարգի բան մը զոր ներսինները չ'ունին եւ չեն հասկնար:

Եւ կը խորհիմ՝ վերջապէս՝ այն Անձի վրայ որ երբեք չհասկցուեցաւ իրեններէն եւ գնաց խաչին ապաւինեցաւ:

Այսօր քանի ժամ ժաք Բուսոններ մեր տուններուն, դպրոցներուն, կազմակերպութիւններուն, հեղեցիներուն պարիսպներէն դուրս ձգուած են, որովհետեւ անոնք՝ պարիսպներէն ներս քաջուածներուն օգտին եւ բարձրացումին համար իսկ դուրս ելած՝ անոնցմէ բան մը առնելի կը փնտռեն...

Ժընեւ

Բ. Մ. ԵՂԻԱՅԱՆ

ԿԱՆՏԻ

(Շար. եւ վերջ)

Կանտի վրայ գլխաւորապէս նայելու չենք իբր քաղաքական առաջնորդ, հապա իբր արդարութեան ախոյեան, մտաւոր մշակ, բարեկարգիչ եւ հոգեւոր առաջնորդ:

Կանտի մտաւոր տաղանդ մըն է: Անոր ուղեղը կը գործէ մեքենայի նման: Ան համալսարանական կրթութիւն ունի: Ան գիտէ թէ՛ Արեւմուտքի եւ թէ՛ Արեւելքի գրականութիւնը եւ փիլիսո-

փայութիւնը: Ան հեղինակն է շատ մը գրքերու եւ գրքոյկների: Ան իր լեզուին թարգմանած է Բլաքինն ու Պլատոնը: Ան մէջբերումներ կ'ընէ Թհորէպոյէն, կը հիանայ Մացցինիի վրայ, կը կարգայ էտվերտ Բարբէնթըրը եւ տեղեակ է թէ Եւրոպայի եւ թէ՛ Ամերիկայի լաւագոյն գրքերուն: Ան գրած է գիրք մը՝ «Է Կայս րու Հեյթ», Հնդկները առողջապահական կերպով կրթելու եւ զօրացնելու համար: Ան միշտ եղած է մէկ կամ աւելի պարբերաթերթերու խմբագիրը եւ իր յօդուածները լափուած են ժողովուրդին կողմէ: Ան աշխատած է իր ժողովուրդը դաստիարակել եւ լուսաւորել: Անոր նպատակը եղած է անուսութիւնը Հնդկաստանէ ջնջել: Ան իր գաղափարները տարածելու համար հիմնած է տիպար ձրի դպրոց մը, Ահմէտապատի մէջ: Այս դպրոցը մտնող աշակերտները պէտք է մտնեն վանական ուխտի մը մէջ: Դպրոցին կանոնն է, որ հոն աշակերտողները պէտք է բաժնուին տունէն եւ ընտանեկան յարաբերութենէ: ա) ճշմարտութեան ուխտը առնեն, բ) սեւէ ապրող արարած չսպաննելու ուխտը առնեն, գ) կուսակրօնութեան ուխտը առնեն, դ) քիմքը զսպելու ուխտը առնեն, հ) չի գողնալու ուխտը առնեն, զ) բանի մը չի տրանալու ուխտը առնեն: Այս դպրոցին մէջ աշակերտներուն կ'աւանդուի անվախութիւն, անձնագոյութիւն, անձնուրացութիւն, հոգեկան մըշակոյթ, գիտական դասերէ զատ:

Կանտի եղած է ընկերային բարեկարգիչ: Ան յայտարարած է թէ Հնդկաստանը ինքնագոյութեան եւ ճիշտիւնի տիրանալու համար նախ ազատուելու է արքեպիսկոպիտ ըմպելիներու չարիքէն: Եւ ան հրահանգ տուած է որ խմելէ դադարին: Եւ այնքան շատեր հրաժարած են ըմպելիքէն, որ Անգլիական կառավարութիւնը ստիպուած է սղջուններու օգ-

նութեան փութալ :

Կանտի չէ աշխատած ֆէսթի սիսթեմը ջնջել Հնդկաստանէն : Սակայն ան սորվեցուցած է որ ֆէսթը առանձնաշնորհում մը չէ , այլ սոսկ գործի եւ պաշտօնի բաժանման մեթոտ մը : Քիսքը արգելք ըլլալու չէ , որ տարբեր դասակարգէ անհատներ իրարու հետ չի յարաբերին : Կանտի պաշտպանած է «անհրպեկներ»ու դատը եւ ցուցնելու համար թէ ինք անոնցմէ չի խորշիր , անոնց մէջ մտած , անոնց դասախօսութիւններ տըւած եւ անոնց հետ յարաբերած է : Եւ ամբողջ Հնդկաստանին բարի եւ գործնական օրինակ մը տալու համար , իր ընտանիքին մէջ որդեգրած է «անհպելի» պզտիկ աղջիկ մը : Ան բարեկամը եւ պաշտպանը եղած է ստրուկ , անարգըւած եւ ճնշուած դասերու եւ անոնց վիճակը բարւոքելու եւ բարձրացնելու համար ահագին ջանքեր թափած է , խորհրդաժողովներ սարքած է : Ան ըսած է թէ անհպելիները պէտք է ազատագրուին եւ հնդկական ընտանիքին մէջ առնուին : Ան գերմարդկային ճիգեր թափած է Հնդկներու և Մահմետականներու միջեւ միութիւն եւ հաշտութիւն գոյացնելու համար : Ան շատ անգամներ խօսած է Մահմետականներու համաժողովներուն մէջ :

Կանտի ախոյեանը եղած է իգական սեռի դատին : Սեռային հարցը Հընդկաստանի համար իրապէս խրթին հարց մըն է , ուր հեշտասիրութիւնը կը տիրէ եւ տափանքը կը յագեցուի նոյնիսկ աստուածներու մեհեաններուն մէջ : Կանտի կը յայտարարէ թէ՛ կիներու հարցը Հնդկաստանի մեծ վէրքը եւ արատն է : Եւ ան կը պահանջէ , որ կիկիներու պատիւը եւ դիրքը բարձրանայ եւ կիներ գրաւեն պատուարժան դիրք ընկերային կեանքի մէջ : Նա կիներէն կը խնդրէ որ իրենք զիրենք բարձրացունեն : Եւ այրերէն կը խնդրէ որ կիները

յարգեն : Նա կը գրէ . «Մոլութեան մէջ թաւալիլը տեղ չ'ունի մեր յեղափոխութեան մէջ : Երդում , ընտանեկան գերակշռութիւն կը նշանակէ թէ մենք պէտք է յարգենք Հնդկաստանի ամէն բնակիչ որպէս մեր եղբայրը կամ քոյրը : Կինը տկար սեռը չէ , այլ լաւագոյն կէսը մարդկութեան , երկուքին ազնուագոյնը , որովհետեւ նոյնիսկ այսօր ան զոհութեան մարմնացումն է , լուռ տառապանք , հեղութիւն , հաւատք եւ գիտակցութիւն : Կնոջ յստակատեսութիւնը յաճախ աւելի ճիշդ ապացուցած է քան այր մարդուն գոռոզ գիտակցութեան յաւակնութիւնը : »

Կանտի իր տիկնոջ հանդէպ եղած է փափկանկատ , յարգալիլը եւ հաւատարիմ : Պարկեշտութիւն եւ առաքինութիւն իր նկարագրին յատկանիշներն են : Ան խորապէս կրօնասէր եւ հոգեւոր մարդ մըն է : Դաւանանքով միադաւան է : Աստուծոյ հետ ինքզինքը գրեթէ նոյնացուցած է : Կեանքով սրբակեաց է , նկարագրով անարատ : Նա ունի փափուկ սիրտ , վեհ հոգի , զգայուն խիղճ : Նա կ'ունկնդրէ ու կը հնազանդի ներսէն եկած «մեղմ ու բարակ ձայնին» : Անոր անձնաւորութենէն հոգեւորութիւնը կ'արձակուի այնպէս , ինչպէս արեգակէն ճառագայթները կ'արձակուին :

Կանտի Հնդկաստանի բոլոր դասակարգերուն վրայ ձգած է զիւթական եւ անհուն ազդեցութիւն : Ան բոլոր ժողովուրդին վրայ ունի զրեթէ աստուածային ներգործութիւն եւ հեղինակութիւն : Զարմանալի չէ որ Հնդկաստան անոր տուած է «Մահաթմա Կանտի» անունը , որ կը նշանակէ Մեծ Հոգի (Աստուծոյ տրուած պատուանունը) : Նա մարմնացումն է հնդկական հոգիին :

Կանտի պատգամ մ'ունի ներկայ աշխարհին : Ան բողոք մըն է արդի նիւթապաշտութեան , դրամապաշտութեան ,

աշխարհակալութեան դէմ: Անհերքումըն է բիրտ ուժի վարդապետութեան: Ան պաշտպանն է տկարներու եւ գրկւածաներու իրաւունքին: Ան ախոյանն է անձնազոհութեան: Ոսչը Հնդկաստանի եւ աշխարհի համար նոր նշանակութիւն առած է, Կանտիի գալստեամբ: Ան յայտնած է թէ խաղաղութիւնը եւ կեանքը ձեռք կը բերուին անձնազոհութեամբ:

Կանտիի պատգամը խառնուած է իր սախոսքերուն մէջ. «Ես կը հաւատամ թէ այս գոհողութեան ոգին պիտի ածի, ինչպէս նաեւ տառապելու կամքը: Այս է իրական ազատութիւնը, ոչ մէկ բան աւելի բարձր է ասկէ, նոյնիսկ ազգային անկախութիւնը: Արեւմտեքը անբաժանելի հաւատք ունի մամոնային եւ նիւթական հարստութեան, այս պատճառով հոգ չէ թէ որքան աղաղակէ խաղաղութեան եւ զէնընկեցութեան համար, իր անանկութիւնը պիտի ազաղակէ աւելի բարձր: Մենք, Հնդկիկներըս, պէտք է ցուցնենք աշխարհին թէ ինչ է այս ճշմարտութիւնը, որ ոչ միայն կարելի կ'ընէ զէնընկեցութիւնը, այլ այն կը փոխակերպէ զօրութեան: Փաստօրէն բարոյական ոյժին բիրտ ոյժն աւելի զօրաւոր ըլլալը պիտի ապացոյցուի անպէն ժողովուրդի մը կողմէ... Պիտի գոյ օրը, երբ տկար, անկարող մարդը, բացարձակապէս անզէն, պիտի ապացուցանէ թէ տկարը արտի ժառանգէ երկիրը: Հնդկիկներու ճակատագիրը կապուած է հոգեկան ուժերու եւ ոչ թէ մկաններու: Ան պէտք է բարձրացնէ մարդկային պատմութիւնը, փոխադրէ զայն նիւթական պայքարներու խառնաշփոթ հովիտէն հոգեկան ճակատամարտներու բարձր լեռնագագաթը: Մեր կռիւն հոգեկան կռիւ մըն է, կռիւ մարդկութեան համար: Մենք պէտք է համոզենք թեթեւամիտները (պըթըրֆլայ) թէ երկինքի ազատու-

թիւնը լաւագոյն է քան գահի պաշտպանութիւնը... Մենք պէտք է ազատագրենք մարդը ինքն իր անձին շուրջ հիւսուած բաղձանքներէն, ազատենք զայն ազգ. եսասիրութեան կաղամակերպութիւններէն: Եթէ մենք կրնանք ժխտել ուժեղը, հարուստը, գինեալը, ցուցնելով աշխարհին անմահ հոգիին ուժը, հսկայ մարմնոյն դղիակը պիտի թաղուի ոչնչութեան մէջ... Մենք Արեւելքի թշուառ անտեսուածներս, մենք պէտք է ամբողջ մարդկութեան ազատութիւնը բերենք: Մեր նպատակն է ամբողջ աշխարհի հետ բարեկամութիւն: Ոչ-բռնութիւնը հկած է մարդուն մէջ, այն պէտք է մնայ: Այն է յայտարարութիւնը աշխարհի խաղաղութեան: խաղաղութեան ճամբան կ'առաջնորդէ անձնազոհութեան:»

«Հայ Սիրս»

Բ. ԼԵՆՈՆԵԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐԾՆՔ

Բնաշրջումի հին վարկածին համեմատ տիեզերքը դիպուածի արդիւնքն էր, ամէն տեսակ փոփոխութիւններ յառաջ կուգային, եւ յարմարագոյն ձեւը կամ միջավայրին լաւագոյն յարմարողը կը շարունակէր իր գոյութիւնը: Այսպիսի գաղափար մը կը հակասի Աստուծոյ գոյութեան, անմահութեան, եւ ազատ կամեցողութեան: Այս վարկածը ներկայիս իր հմայքը կորսնցուցած է, եւ շատ մը մեծ գիտուններ անփառտելի կը նկատեն զայն: Վերջերս Փրոֆ. Գոմբըլըն, որ Նոպիւհեան մրցանակի արժանացած աշխարհիս մեծ գիտուններէն մէկն է, իր կատարած խուզարկութեանց իբր արդիւնք կ'ըսէ. «Աշխարհը եւ մարդը հիւլէներու քառսէն պատահամբ յառաջ չեն եկած: Ընդհակառակը բաւականաչափ ապացոյց կայ զօրաւոր կերպով թելադրող թէ ամէն բանի ետին նպատակ մը, ուղղութիւն տուող իմա-

ցականութիւն մը կայ, որուն նշանակէտն է իմացական հոգիներու ստեղծումը:» Փրոֆէսորը կ'ընդունի թէ միտքը նիւթին վրայ կազդէ, և թէ «Աշխարհիս վրայ ամենակարևոր բաները, թերևս, մարդոց զաղափարներն են:» Շատ մը բաներու մեր կամքէն անկախ և մեքենական կերպով պատահումը ընդունելով հանգերձ՝ կ'ընդունի թէ մարդը ընտրելու ազատութիւնը ունի: «Հետեւաբար, մէկուն զաղափարները նիւթական մասնիկներու (Molecule) հակազդեցութիւններուն արդիւնքը չեն:» Անմահութեան մասին խօսելով կը յայտնէ թէ ուղեղային գործողութենէն անկախ կերպով չափով մը խորհիլ կարելի է. և թէ գիտակցութիւնը կրնայ շարունակել ուղեղի ոչնչացումէն վերջն ալ: «Երկտասարդութեան արկածախնդրութիւններու մարզանքները, չափահասութեան պայքարը, ձախողանքն ու յաղթանակը, ցաւն ու հաճոյքը, ծիրութեան առանձնութիւնն ու խաղաղութիւնը կը կազմեն այն կրակը որուն մէջէն մարդ պէտք է անցնի իր հոգիին անխառն օսկին դուրս հանելու համար: Այս ամէնը կատարուելէ վերջը բնութիւնը ի՞նչ պիտի ընէ զայն, պիտի բնաջնջէ: Ո՛հ, ինչ անհուն վատնում!» կը բացականչէ մեծ գիտունը:

ՆԱՄԱԿՆԵՐ

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ ՀԱՅ ԱԻԵՏ.
ԵԿԵՂԵՑԻԷՆ

Մեր նախորդ մէկ թղթակցութեամբ գրած էինք Պ. Այրէսի Հայ Աւետ. Եկեղեցիին կազմութեան մասին: Թէպէտ մեր սրտին և վարդապետութեան, մտային և հոգեկան ժառանգին յարմար եկեղեցի մը կրցանք ունենալ, դէմ դնելով չատ մը գծուարութիւններուն և

հակահոսանքներուն, սակայն, առաջին օրէն միտքերը զրաղեցնող խնդիրն էր այս նորակազմ եկեղեցիին համար պտնել կարող, փորձառու, բարի, զոհաբերուող հովիւ մը: Վեր. Հայկ Ատատուրեան իր Պ. Այրէս այցելութեան առաջին օրէն իսկ, մեզի գործակցեցաւ այս մասին և տարբեր տեղերու և անձերու զբոսարար դիմումներ կատարեցինք: Ո՞վ պիտի համարձակէր ինքզինքը նետել նորակազմ եկեղեցիի մը ծոցը, զրոհցիներուն անձանթ մնացած քաղաքի մը մէջ: Իրաւունք ունէինք ընելու այս հարցումը, որ մեզի մտավախութիւն կը պատճառէր, քանզի ամէն տեղէն մեր դիմումներուն ժխտական պատասխաններ ստացանք: Այս միջոցին Վարչական Ժողովին բոլոր անդամներուն ուշադրութիւնը Վեր. Հ. Ատատուրեանի վրայ կը կեդրոնանար, որուն իբր հովիւ հրաւրուելը անակնկալ մը պիտի ըլլար, ինչպէս որ իր քաղաքս այցելութիւնը եղած էր: Եւ սակայն Վեր. Հ. Ատատուրեան չուզեց մեզ լքուած թողուլ, և ընդունեց մեր հրաւերը, յօժարելով բաժնուիլ իր հայրենիքէն (Մ. Նահանգներ), իր եկեղեցիէն, նոյնիսկ իր ընտանիքէն, Աստուծոյ թաղաւորութեան սիրոյն համար, զոհելով իր հանգիստը և այսպէս տառական իմաստով հնազանդելով մեր Տիրոջ խօսքին: Անիկա կարճ ժամանակամիջոցի մը համար Մ. Նահանգներ գնաց իր եկեղեցիին հրաժեշտ տալու և իր կնոջ ու դուստրին հետ տեսնուելու համար: Յունիսի վերջերը դարձեալ մեր մէջ պիտի ըլլայ առանձինն ըլլալով: Կը խնդրենք որ թէ՛ մեր հովուին և թէ՛ մեր եկեղեցիին համար աղօթէք, որ պէսզի կարենանք միջոց մ'ըլլալ մեր ազգակիցներուն «կեանք և աւելի կեանք ունենալ» նուն համար:

Թ. Դ. ՍԱԿԻՑ

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ Ի ԿԻՊՐՈՍ

Պատ. Ս. Աղպապեան իննը տարիներէ ի վեր Լարնագայի Աւետ. Եկեղեցիի քարոզչական պաշտօնը կը վարէր, ամիսը անգամ մըն ալ Նիկոսիա գալով Աւետ. Եկեղեցին կը քարոզէր ու կ'այցելէր ժողովուրդին տունները մխիթարելով հոգեւորապէս: Նիկոսիոյ Աւետ. Եկեղեցին զգալով հայ քարոզիչի մը հրամայական պէտքը կղզիին միսիօնի կոմիտէէն խնդրեց որ Պատ. Աղպապեանի արտօնէ ժամանակի մը համար Նիկոսիայի Աւետ. Եկեղեցիին իբր սեպհական քարոզիչը գործելու: Եւ միսիօնի կոմիտէին հրահանգին վրայ Պատ. Աղպապեան՝ անմիջապէս ընդունեց եւ Նիկոսիա փոխադրուեցաւ: Ժողովուրդը ասկէ քաջալերուած մի քանի ամիս ետքը կրկին դիմեց նոյն մարմին, այս անգամ խնդրելով որ Պատ. Աղպապեան Նիկոսիայի Աւետ. Եկեղեցւոյ վերայ հոգեւոր հովիւ ձեռնադրուի: Միսիօնի կոմիտէն նկատի առնելով հովուի մը անհրաժեշտութիւնը իր սրտումը յայտարարեց եկեղեցիին բեմէն ըսելով որ, Ապրիլ 30ին տեղի պիտի ունենայ ձեռնադրութիւնը: Որոշեալ ժամանակէն առաջ Հայ, Յոյն եւ Ամերիկացի ժողովուրդը փութացած էին եկեղեցիին աթոռները գրաւելու: Պօսեցան Տր. Մակֆէլէնտ (Լաթաքիայէն) «Պաշտօն Թիսուսը» նիւթին վրայ, Վեր. Քասթին՝ (Կիպրոսի ընդհանուր հոգեւոր հովիւ) հովուին կոչումին եւ պարտականութեան վրայ, Լարնագայի Ամերիկեան Վարժարանի տնօրէն Մր. Ուիր՝ ժողովուրդին պարտականութեան վրայ, եւ Տոգթ. Մուրատեան՝ հայերէն լեզուով շեշտեց ժողովուրդին պարտականութիւնները:

Պատ. Աղպապեան Տր. Մակֆէլէնտի հրաւերով բեմին առջեւ ծունր գրաւ, եւ իր գլխուն վրայ իրենց աչերը դրին

Վեր. Քասթին, Տր. Մաղարոսը եւ Մր. Ուիր: Ձեռնադրութեան արարողութիւնը խիստ խորհրդաւոր կերպով կատարուեցաւ: Տր. Մակֆէլէնտի հրաւերով նորընծայ հովուին օրհնութիւնովը ժողովուրդը մեկնեցաւ խորհրդաւոր տպաւորութեան տակ:

Լարնագայի Աւետ. ժողովուրդէն Տիարք Ս. Կիւլէսէրեան, Մ. Քասունի եւ Տ. Մելգոնեան մասնաւորաբար Նիկոսիա գալով ներկայ գտնուեցան ձեռնադրութեան հանդէսին, ցոյց տալով նորընծայ հովուին եւ Նիկոսիոյ Եկեղեցիին հանդէպ իրենց համակրանքը, որուն համար մեծապէս շնորհակալ եղաւ Վարչութիւնը:

Ժողովուրդին բուն փափաքին վերայ եւ Վարչութեան որոշումով ի պատիւ նորընծայ հովուին հանդէս մը սարքուեցաւ Մայիս 23ի իրիկունը: Հանդէսը կատարուեցաւ Ամերիկեան Աղջկանց Վարժարանի ընթերցասրահը՝ որ դարձաւ առաջին ծաղկապարգ կամարով մը որուն մէջտեղը կը ծածանէր ազգային եռագոյնը իր աջ ու ձախ կողմերը ունենալով Բրիտանական ու Ամերիկեան դրոշակները: Ծաղկակամարին ճիշդ մէջտեղը բազմած էր նորընծայ հովիւը, որ կը նախագահէր հանդէսին. անոր աջ ու ձախ կողմը կը նստէին վարչութեան անդամները: Հովիւին գլխուն վերեւ դրուած էր մի շրջանակ, որուն մէջ ասեղնագործուած էր «Աստուած սէր է» նախադասութիւնը: Հանդէսը սկսաւ Տոգթ. Մաղարոսի աղօթքով: Տիկ. Ալիս Նիկողոսեան դաշնակին վրայ նուագեց ազգային քայլերգը: Բացման հանդէսը ըրաւ Տիար Թովհանէս Տէր Եղիկիէլեան, օրուան խորհրդաւոր նպատակը բացատրելով: Հոգեւոր երգէ մը ետքը խօսեցաւ Տոգթ. Ս. Նիկողոսեանը «Ժողովուրդին պարտականութիւնները հովիւին ու եկեղեցիին հանդէպ» նիւթին վրայ, իսկ Տոգթ. Ս. Մուրատեանը

«Հովիւին պարտականութիւնները ժողովուրդին հանգէպ» նիւթին վրայ: Երկու խօսողներն ալ ծափահարութիւններ խլիցին ժողովուրդէն:

Օրիորդաց երգչախումբը երգ մը երգեց՝ Օր. Արփինէ Մուրատեանի զաշնակի առաջնորդութեամբ: Յետոյ բեմը հրաւիրուեցաւ Տիար Բ. Կէօնճեան, որ ժողովուրդին սրտին և զգացումներուն տնկիղծ թարգմանը հանգիստացաւ ըսելով թէ տեղիս ժողովուրդը լաւապէս բանը խնդրեց բարձրեալն Աստուծոյ, իր եկեղեցիին համար հոգեւոր հովիւ մը ուզելով յանձին Վեր. Ս. Աղպապեանի: Ապա խօսեցաւ Տոգթ. Մ. Մաթոսեանը, որուն նիւթն էր «Միսիոնարներու աշակցութիւնը Աւետ. եկեղեցիներուն»: Յարգելի Տոգթորը ըսաւ թէ Աւետ. ժողովուրդը միշտ երախտապարտ եղած է անցեալին մէջ, երախտապարտ է ներկայիս իսկ երախտապարտ պիտի մնայ ապագային՝ նոր սերունդին կտակելով միշտ նոյն երախտագէտ զգացումը բոլոր միսիոնարութեանց և տեղւոյս միսիոնարութեան հանդէպ, որուն կը պարտինք մեր ներկայ հովիւը: «Ուստի», վերջացնելով ըսաւ ան, «ճանչնանք անոր յարգը մեր սրտին մէջ և մենք ալ ապրինք հովիւին սրտին մէջ:»

Երգ մը երգեց Կիր. Վարժարանի աղջկանց երգչախումբը Օր. Արփինէ Մուրատեանի զաշնակի առաջնորդութեամբ: Յետոյ խօսեցաւ Տիար Ս. Երկաթեան հովիւի և ժողովուրդի ներգաշնակ գործունէութեան մասին:

Իսկ Տիար Մ. Քասունի, Լարնապայի Ամերիկեան Վարժարանի ուսուցիչը, խօսեցաւ ժառանգականութեան վրայ: Յետոյ Կիր. Վարժարանի չորս սանիկները իմաստալից արտասանութիւններ ըրին: Ամէնէն վերջը Տոգթ. Նիկողոսեան ժողովուրդին կողմանէ նորընծայ հովիւին նուիրեց Աստուածաշունչ գիրք մը եւ խնքնահոս ոսկեծայր գրիչ մը իբր

անմոռանալի յիշատակ հովիւին ձեռնադրութեան: Վեր. Ս. Աղպապեանի յուզեալ ձայնով իր շնորհակալութեան արտայայտումէն ետք հանդէսին առաջին մասը լրացաւ: Քստն վայկեան դադարի միջոցին ժողովուրդը պատուասիրուեցաւ Կիտրոնի օշարակով եւ խմորեղէնով: Ապա Տիարք Ս. Ալմաճեան եւ Ս. Տօմպուրեան իրենց զուարճալի, իմաստալից պատմութիւններով ընտանեկան շէն մթնոլորտ մը ստեղծեցին: Երիտասարդաց երգչախումբը անգլերէն երգ մը երգեց առաջին խօսողէն վերջը: Հովիւին օրհնութեամբ եւ Օր. Քէշիշեանի կողմանէ Բրիտանական քայլերդի նուագումով ժողովուրդը բաժնուեցաւ:

ՊԵՅՐՈՒԹԷՆ

930 Յուլիս 6 Կիրակի օր հիւղաւանի Հայ Աւետ. Եկեղեցւոյ մէջ կատարուած մասնաւոր պաշտօնի միջոցին Վեր. Կ. Հասէսեան և Վեր. Ե. Հատիտեան խօսեցան Պօղոս Նուպար փաշայի ազգ. և բարեխրական գործունէութեան շուրջ, ներկայացնելով անոր ծառայող և զոհարերող կեանքը որ կրնայ իբրեւ օրինակ ծառայել մեր նոր սերունդին:

Վեր. Ե. Հատիտեան խնամեալ պերճիմաստ քարոզ մը ըրաւ. մի առ մի թուեց անդարձ կերպով մեզմէ նոր բանութեամբ Հայերու բարեմասնութիւններն ու առաքինութիւնները, որոնք անտարակոյս Հայ պատմութեան փայլուն ու չքեղ էջերը պիտի կազմեն: Յուզուած շեշտով ռեկեոյեց Հայ պատմական փառապանծ գէմքերը, որոնք անցեալին մէջ առաջնորդած են Հայ ժողովուրդը և անոր սորվեցուցած գեղեցկին, ճշմարտին և բարիին պաշտումը: Ապա մտալթեց որ Տէրը Եզրէ Դուրեաններ և Պօղոս Նուպարներ պատրաստէ՝ քրիստոնէական և քաղաքակրթութեան սկզբ-

բունքներու սնանկացումին հետեան-
քով հայրենագործի և զաղթականու-
թեան անտանելի կեանքին մէջ տուայ-
տող Հայ Ժողովուրդին ծով ցաւերը ա-
մոքելու, հոգեկան կազդոյր բերելու հա-
մար:

Հիւղաւաններու մէջ փոքրիկներու
հիւանդութիւն կայ, մահեր յաճախա-
յէպ են:

930 Յուլիս 13

ԵՐՈՒԱՆԴ. Լ. ԱՂԷԿԵԱՆ

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

Տր. Ճ. Մէրիլ և Մր. Էտքինզ քա-
ղաքս վերադարձան Կ. Պոլսէն, ուր գա-
ցած էին Պորտի Մերձաւոր Արեւելքի
Ճիւղին տարեկան ժողովին մասնակցե-
լու: Ժողովը կատարուած է Սկիւտարի
Աղջկանց Լիսէին մէջ մօտ 60 պատուի-
րակներու մասնակցութեամբ: Մասնա-
ւորապէս ուշադրութեան առարկայ իւ-
թեր եղած են, շինական գործեր և
թերթի ու գրքերու հրատարակութիւն:
Պորտի հրատարակչական բաժինը ցու-
ցադրած է իր և իսլամական մամուլի
կողմանէ հրատարակուած գրքերու նը-
մուշները՝ որոնք քրիստոնէութեան նը-
պաստաւոր են և կամ քրիստոնէական
զաղափարականներ կը պարունակեն:
Յառաջիկայ տարուան պիւտճէին մէջ
տասու հարիւր, մօտ 10 հազար տոլար,
վիզ մը կատարուած է:

Ուշադրութեան արժանի է սա պարա-
գան թէ . . . ի կողմանէ նոր տառերով
թրքերէնի թարգմանուած է Լուսովիկի
«Քրիստոսի կեանքը», «Ինսան Օղլու»
նիւթին տակ, եւ Dermenghem ի «Մու-
համէտի կեանքը»:

Տրուած տեղեկութեան համեմատ Կ.
Պոլսոյ հայ բնակչութեան թիւն է 70000:
Ձորս աւետարանական բեմեր կան:

Պայպլ Հաուզի մէջ էմմանուէլ Եկեղե-
ցիկի հովիւն է Վեր. Ե. Քասուռի. հոս
պաշտօնը կը կատարուի թրքերէն լե-
զուով, և պաշտամունքին ներկայ կը
գտնուին ամէն ցեղէ մարդիկ, թէպէտ
անոնց մեծամասնութիւնը Հայերէ կը
բաղկանայ: Կիրակի մը հոս քարոզած
է Տր. Մէրիլ, և պաշտամունքէն վերջ
Վեր. Քասուռի կողմէ իրեն ներկայաց-
ուած է Յոյն մը, Հրեայ մը՝ Հարաւային
Րուսիայէն, Արաբ մը՝ որուն կրնը Թըր-
քուհի մ'է և ինքը քրիստոնէութիւնը
ընդունած է և միեւնոյն աստիճան Կ. Պոլ-
սոյ մէջ քարոզիչ մըն է, Պուլկար մը
և երկու Հայ Առաքելականներ:

Լանկայի Եկեղեցիին մէջ, Կէտիք-
փաշա, պաշտօնը կը կատարուի Հայե-
րէն լեզուով, հովիւն է Վեր. Ս. Մա-
նուկեան, որ Թուրք կառավարութեան
կողմանէ շնորհաւորութեան արժանա-
ցած է իր եկեղեցիին յաջող զարոյցին
համար:

Ալիզիյէի Հայ Աւետ. Եկեղեցիին նա-
խակրթարանին սիրուած վարժուհիներէն
Սր. Պէագրիս Լսշխանեան իր մահ-
կանացուն կնքեց Յուլիս 12ին, Հալէպ,
կարճատեւ հիւանդութենէ մը վերջ,
խոր սուգի մատնելով բոլորը: Յուդար-
կաւորութեան հանդէսը կատարուեցաւ
նոյն օրը, Շաբաթ կէսօրէ հոգը, Ա-
լիզիյէի Եկեղեցիին մէջ խուռն բազմու-
թեան մը ներկայութեան: Վեր. Կ.
Յարութիւնեան արցունքոտ աչքերով և
յուզեալ շեշտերով գեղեցիկ դամբանա-
կան մը խօսեցաւ ներկայացնելով հան-
գուցեալը իբր հաւատարիմ, խոնարհ,
ժպտաղէմ, ինքզինքը ցուցադրելու ախ-
տէն ազատ անտրտունջ գործիչ մը նա-
խակրթարանի և Կ. Դպրոցի մէջ, Ե.
Ք. Զանից Ընկերակցութեան և եկեղե-
ցիկի երգիչ խումբին մէջ, որոնցմէ իւ-
րաքանչիւր իր յարգանքը կը յայտնէր
ծաղկեպսակներով:

صاحب الامتياز و مدير المستول

قيس قره بته هاروتونيان